

ԷԶՄԻԱԾՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Վ. ԶԱՔԱՐՅԱՆ

1941 թ. հունիսի 22-ին հիտլերյան Գերմանիան ուխտադրուծ կերպով հարձակվեց Սովետական Միության վրա: Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մոբիլիզացրին սովետական ժողովրդի ուժերը, կռիցին Ելենի հայրենական պատերազմի՝ ընդդեմ ֆաշիստական հրոսակների, պաշտպանել սովետական հայրենիքի պատիվը, ազատությունն ու անկախությունը:

Պատերազմի լուրը կայծակի արագությամբ տարածվեց սովետական ամբողջ երկրով մեկ: ՍՍՀՄ բոլոր հանրապետություններում, քաղաքներում ու գյուղերում պատերազմի առաջին օրը տեղի ունեցան միտինգներ:

Էջմիածին քաղաքի աշխատավորների միտինգին մասնակցեց 8000 մարդ: Նրանք անարգանքի սյուներն գամեցին ֆաշիստներին, իրենց պատրաստակամությունը հայտնելով մինչև արյան վերջին կաթիլը կովիլ ու պաշտպանել սովետական հողը, անձնուրաց աշխատել թիկունքում:

Ամեն օր զինկոմիտարիատ էին ներկայանում հարյուրավոր էջմիածնեցիներ, խնդրելով իրենց կամավոր ուղարկել ռազմաճակատ: Կամավորների առաջին շարքերում էին կոմունիստներն ու կոմերիտականները: Կամավոր ռազմաճակատ մեկնեցին էջմիածնի քաղաքային սովետի գործկոմի նախագահ Գարեգին Պետրոսյանը, ՀԿ(բ)Պ էջմիածնի շրջկոմի բաժնի վարիչ Արամալիս Սահակյանը, 17-րդ կուսհամագումարի անվան կոլտնտեսության վարչության նախագահ Թովմաս Եղիազարյանը և ուրիշներ:

Առաջին մոբիլիզացիայի ժամանակ միայն մեկ ամսում էջմիածնի շրջանից և քաղաքից բանակ մեկնեց 2000-ից ավելի մարդ: Կուսակցության շրջանային կոմիտեն, շրջսովետի և քաղսովետի գործկոմները իրականացրին մի շարք միջոցառումներ՝ քաղաքում և շրջանում աշխատանքները ռազմական ձևով կազմակերպելու, ճակատայիններին օգնելու համար:

1941 թ. հուլիսին հրապարակվեց ՍՍՌՄ ժողկոմսովետի «Հակաօդային և հակաքիմիական պաշտպանության համար բնակչության ընդհանուր պարտադիր պատրաստության մասին» որոշումը, որի հիման վրա կոլտնտեսություններում, արտադրական ձեռնարկություններում, ուսումնական հաստատություններում, բնակելի թաղամասերում կազմակերպվեցին հակաօդային և հակաքիմիական պաշտպանության խմբակներ:

1941 թ. հուլիսից ստեղծվեցին նաև աշխարհազորի գումարտակներ և վաշտեր, որտեղ ընդգրկվեցին ՄՏԿ-ի «Անաստված», 17-րդ կուսհամագումարի անվան, «Նոր Եվգոկիա» կոլտնտեսությունների, գինու գործարանի և մյուս հիմնարկ-ձեռնարկությունների աշխատավորները:

Շուտով էջմիածնի աշխատավորները ներգրավվեցին ընդհանուր պարտադիր ուսուցման մեջ: Կատարվեց տղամարդկանց հաշվառում, կազմակերպվեցին վաշտեր ու դասակներ: Հոկտեմբերի 1-ին սկսվեցին ընդհանուր ռազմական ուսուցման առաջին հերթի պարապմունքները:

Ստեղծվեց կործանիչ գումարտակ, որը կռված էր ցանկացած պահին կատարել մարտական առաջադրանք, կովիլ թշնամու դիվերսանտների և գործակալների դեմ:

Մինչև 1945 թվականի փետրվարը ամբողջ շրջանում և քաղաքում ռազմուսի գծով, ինչպես նաև Պաշտպանության 75 խմբակներում (որոնցում ընդգրկված էին 5112 անդամներ) պատրաստվեցին վորոշիլովյան հրաձիգներ, կին հրահանգչուհիներ, գնդացրորդներ, ականաձիգներ, պատանի վորոշիլովյան հրաձիգներ, ավտոմատավորներ, մնայաբերներ, հեծանվորդներ, բազմաթիվ ավտոավարորդներ, մոտոցիկլիստներ⁴ և այլն: Աշխարհազորում, ռազմուսի ցանցում, կործանիչ գումարտակում ընդգրկվածներից շատերը համալրեցին Կարմիր բանակի շարքերը:

էջմիածնի կոլտնտեսությունների և արտադրական ձեռնարկությունների աշխատանքը վերակառուցվեց պատերազմական ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան: Պատերազմի առաջին ամսում շրջանում և քաղաքում 800-ից ավելի նոր աշխատավորներ ընդգրկվեցին արտադրութայն մեջ, նրանց թիվը «Անաստված» կոլտնտեսությունում հասավ 100-ի⁵:

Նախորդ տարիների համեմատությամբ շրջանի կոլտնտեսությունները 1941 թ. 10 օր շուտ ավարտեցին հացահատիկի բերքահավաքը: Արագ թափով շարունակվեցին բամբակի, խաղողի և գյուղատնտեսական մյուս կուլտուրաների մշակութային և բերքահավաքի աշխատանքները: Ինքնաձեռնակ և Կարմիր բանակ մեկնածուներին փոխարինում էին կանայք ու ծերերը, պատանիներն ու աղջիկները:

1941 թ. հուլիսին «Անաստված» կոլտնտեսությունում աշխատանքային 12 օրում ավարտվեց 327 հեկտար հասկավոր կուլտուրաների հունձը: Արագ թափով կատարվեց նաև կալսումը՝ նախորդ տարվա համեմատությամբ 25 օր շուտ: Հեկտարից միջինը ստացվեց 16 ցենտներ հացահատիկ: Մեծ ուշադրություն է դարձվում անասնապահության բնագավառին:

Օգոստոսի 23-ին Թբիլիսիում տեղի ունեցավ Անդրկովկասի ժողովուրդների հակաֆաշիստական միտինգը, որտեղ գոտեպնդող, հայրենաշունչ ելույթներ ունեցան հայկական պատվիրակութայնից ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, գրող Նաիրի Զարյանը, ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Հայկանուշ Դանիելյանը, Հայկական ՍՍՀ ժողովրդական ուսուցիչ Սիմակ Սահակյանը: Պատվիրակութայն կազմում էր նաև էջմիածնի «Անաստված» կոլտնտեսութայն նախագահ Մ. Նալբանդյանը:

Անդրկովկասի ժողովուրդների հակաֆաշիստական միտինգը վերածվեց ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամութայն, կոմունիստական կուսակցութայն և սովետական կառավարութայն շուրջը սերտ համախմբվածութայն վառ ցույցի: Միտինգը ընդունեց դիմում՝ ուղղված Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի ժողովուրդներին:

Օգոստոսի վերջերին և սեպտեմբեր ամսին Հայաստանի քաղաքներում և դուրդերում, գործարաններում և կոլտնտեսութայններում, հիմնարկ-ձեռնարկութայններում կազմակերպվեցին միտինգներ, ժողովներ, որտեղ քննարկվում էր անդրկովկասյան ժողովուրդներին ուղղված դիմումը: Օգոստոսի 28-ին էջմիածնում կայացավ «Անաստված» կոլտնտեսութայն աշխատավորների ժողովը: Անաստվածցիները ընդունեցին նամակ՝ ուղղված Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի կոլտնտեսականներին: Ստանձնելով նոր, բարձր պարտավորութայններ, նրանք խոստացան աշխատել ավելի լավով, հայրենիքին տալ ավելի շատ հացահատիկ, խաղող, բանջարեղեն, միրս և անասնաբուծական մթերքներ: Նրանք պարտավորվեցին նաև կազմակերպել երկու սանիտարական դրուժինա, մեկ գնդացրային և երկու հրաձգային խմբակ, իսկ կոլտնտեսութայն աշխարհադորայիններին պահել մարտական պատրաստութայն վիճակում՝ պահանջված ժամին Կարմիր բանակի շարքերը համարելու համար: «Անաստված» կոլտնտեսութայն աշխատավորների այս նախաձեռնութայնը ամենայայն արձագանք պետք է գտնի մեր հանրապետութայն բոլոր տնտեսութայններում» — գրում էր «Սովետական Հայաստան» թերթը իր խմբագրականում:

Անաստվածցիներն աշխատեցին կրկնապատկված եռանդով՝ հասնելով բարձր ցուցանիշներին: 1942 թ. «Անաստված» կոլտնտեսութայնը պետութայնը հանձնեց 789 ցենտներ հացահատիկ, 4900 ցենտներ բամբակ, 3884 ցենտներ խաղող, 111 ցենտներ կաղամբ, 346 ցենտներ պոմիդոր, 47 ցենտներ վարունգ, 130 ցենտներ սոխ, 75 ցենտներ միս, 597 կիլոգրամ բուրդ, 322 կիլոգրամ յուղ, 233 կիլոգրամ պանիր, 3816 հատ ձու, 25 ցենտներ ճակնդեղ:

Ջանաբեր շէին խնայում 17-րդ կուսհամագումարի անվան կոլտնտեսութայն մարզիկ: Առանձնապես աչքի են ընկնում բրիգադիրներ Մկրտիչ Ղազարյանի, Օֆիկ Սողոմոնյանի, Զարիկ Գեվորգյանի բրիգադները: Անձնուրաց էին աշխատում օղակավարուհիներ Արուսյակ Դավթյանը, Հնազանդ Պողոսյանը, Համասփյուռ Պողոսյանը, Զարուհի Խանամիրյանը, Արփենիկ Սարգսյանը և ուրիշներ:

Բարձր բերքի համար էին պայքարում նաև 17-րդ կուսհամագումարի անվան, «Նոր Եվգոկիայի» կոլտնտեսականները: Աշխատանքային ուժ օրում եվգոկիացիները ավարտեցին 1941 թ. հացահատիկի հունձը, կալսումը, 118 տոկոսով կատարեցին բամբակի հումքի հանձնման տարեկան պլանը: 1941—1942 թթ. կոլտնտեսութայնը ժամկետից շուտ փակեց պետական պարտավորութայնները:

Վճռական ուժ էին կոմերիտական-երիտասարդական բարձր բերքի օղակները և բրիգադները: Շրջանում կար բարձր բերքի երիտասարդական 21 օղակ: Շրջանի գյուղատնտեսութայն բնագավառի հաջողութայնների մեջ իր նշանակալի ավանդն ուներ Վաղարշապատի ՄՏԿ-ի կոլեկտիվը: Բանակ մեկնածուներին փոխարինելու նպատակով

կայանին առընթեր 1941 թ. հունիսի 29-ին կազմակերպվեցին տրակտորիստների դասընթացներ, որտեղ ուսանում էին կանայք և աղջիկներ: 1944 թ. շորորդ եռամսյակի տրակտորների և գյուղատնտեսական գործիքների նորոգումները կատարելու գործում ունեցած բարձր ցուցանիշների համար Վաղարշապատի ՄՏԿ-ն նվաճեց միութենական հողժողովմատի փոխանցիկ կարմիր դրոշմը:

Կուսակցությունն ու սովետական կառավարությունը բարձր գնահատեցին գյուղատնտեսության բնագավառի մարդկանց անձնագոհ աշխատանքը: ՍՍՀՄ Գերագույն սովետի 1944 թ. փետրվարի 8-ի հրամանագրով, Հայկական ՍՍՀ-ից 388 մարդ պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով ու մեդալներով: Էջմիածնի շրջանից պարգևատրվեց 16 մարդ, իսկ քաղաքից՝ 7: Լենինի շքանշանով պարգևատրվեցին ՀԿ(Բ)Պ Էջմիածնի «Անաստված» կոլտնտեսության վարչության նախագահ Մ. Նալբանդյանը, ՄՏԿ-ի տրակտորիստ Ա. Սարգսյանը: «Պատվո Նշան» շքանշանով պարգևատրվեցին Էջմիածնի բամբակագործական փորձակայանի դիրեկտոր, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ա. Բարսեղյանը, ՄՏԿ-ի ավագ մեխանիկ Ա. Ղազարյանը, «Աշխատանքային գերազանցողիցան համար» մեդալով՝ շրջովետի գործկոմի հողբաժնի վարիչ Ա. Հովակիմյանը, հողբաժնի անասնաբույժ Ա. Ալվազյանը, Էջմիածնի 17-րդ կուսամագուստի անվան կոլտնտեսության բրիգադի շ. Թովմասյանը:

Հայրենական պատերազմի տարիներին իրենց աշխատանքը նոր պահանջներին համապատասխան կազմակերպեցին գինու գործարանի, տեղադր ու սննունդ կոմբինատների, արտադրական կոոպերացիայի ձեռնարկությունների, մետաղագործական, փայտամշակման, «Նոր տարադ» տրիկոտաժի արտելների և կապի հանգույցի կոլեկտիվները: Ռազմաճակատի և թիկունքի կարիքների համար արտադրանքի բազմապիսի տեսակներ էին թողարկում սննունդ կոմբինատը և Հայկոնսերվտրեստի Էջմիածնի բաժանմունքը: Կարի արտելը կատարում էր ռազմական պատվերներ:

Հայրենական պատերազմի տարիներին քաղաքում շրջապահեցին կառուցողական և բարեկարգման աշխատանքները: 1944 թվականի սեպտեմբերի 20-ին Հայկական ՍՍՀ ժողովումով տրորում ընդունեց Էջմիածնի քաղաքի բարեկարգման մասին: Միայն 1944 թ. պիտական բյուջեից այդ նպատակի համար հատկացվեց 2 միլիոն ռուբլի: Բարեկարգման աշխատանքները շարունակվեցին նաև 1945 թվականին⁷:

Հայրենական պատերազմի տարիներին քաղաքում շրջապահեց քաղաքական, հասարակական, մշակութային կյանքը:

Մանկավարժների մեծ մասը մեկնել էր ռազմաճակատ: Դպրոցները տեղագործված էին հարմարություններից զուրկ շենքերում, ձմռանը վառելիքը քիչ էր, զգացվում էր դասագրքերի, դրպրոցական պիտույքների, լաբորատոր սարքերի պակաս: Շատ պատանիներ, հատկապես բարձր դասարանցիներից, թողել էին դպրոցը՝ աշխատանքում փոխարինելով իրենց հարազատներին: Չնայած այս բոլորին, դպրոցների ուսուցիչները շփոթվեցին, շարունակեցին իրենց ազնիվ գործը:

Դժվարին պայմաններում էին աշխատում նաև Շոթա Ռուսթավելու անվան մանկավարժական ուսումնարանի մանկավարժները: Հարկավոր էր ուսուցիչների ռեզերվ պատրաստել ռազմաճակատ մեկնածներին փոխարինելու համար: Եվ նրանք պատվով կատարեցին իրենց խնդիրը:

Պիտական թատրոնը և կինոն դարձել էին աշխատավորներին սովետական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի, ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրության ու բարեկամության ոգով դաստիարակելու իսկական օջախներ: Մարտական դիրքերում էր «Կոլխոլ ֆրոնտ» շրջանային թերթը:

Էջմիածնի աշխատավորները միահամուռ կերպով ձեռնամուխ եղան պաշտպանության ֆոնդի համար միջոցների հավաքմանը: Նրանք գումարներ տվեցին նաև լրացուցիչ տանկային շարասյուներ, մոտորներ, ինքնաթիռների էսկադրիլիաներ կառուցելու համար, տաք հագուստներ, մրգերով ու սննդամթերքներով լի ծանրոցներ ուղարկեցին ռազմաճակատ, օգնում էին աղատագրված շրջանների բնակչությանը, բնակավայրերի վերականգնմանը, ինչպես նաև Հայաստան և Էջմիածնի էվակուացված սովետական մարդկանց:

«Անաստված» կոլտնտեսության նախագահ Մաթևոս Նալբանդյանը «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյան կառուցման համար նվիրում է 100 000 ռուբլի, «Նոր նվաճիկ» կոլտնտեսության անդամ, 70-ամյա Պողոս Բչկչյանը՝ 30 հազար ռուբլի, ՄՏԿ-ի տրակտորիստ Սարգիս Բարսյանը՝ 30 հազար ռուբլի և այլն:

Շրջանի աշխատավորները պատերազմի միայն առաջին երկու տարում երկրի պաշտպանությանը տրամադրեցին 4 միլիոն 281 հազար 400 ռուբլի: Այս միջոցների զգալի բանակությունը բաժին էր ընկնում Էջմիածնի քաղաքին⁸:

- ¹ *Տե՛ս ՄԼԻ հայկական մասնաճյուղի կոմարտիւի՛, ֆ. 14, գ. 116, ց. 2, թ. 20:*
- ² *Տե՛ս նույն տեղը, թ. 20—21—22:*
- ³ *Տե՛ս նույն տեղը, գ. 86, ց. 2, թ. 28:*
- ⁴ *Տե՛ս նույն տեղը, գ. 160, ց. 2, թ. 42:*
- ⁵ *Տե՛ս նույն տեղը, գ. 116, ց. 2, թ. 21—22:*
- ⁶ *Տե՛ս «Սովետական Հայաստան», 1942, 30 օգոստոսի:*
- ⁷ *Տե՛ս ՄԼԻ հայկական մասնաճյուղի կոմարտիւի՛, ֆ. 14, գ. 166, ց. 2, թ. 17—19:*
- ⁸ *Տե՛ս նույն տեղը, գ. 116, ց. 2, թ. 25—27:*

В. А. ЗАКАРЯН — Трудящиеся Эчмиадзина в годы Великой Отечественной войны.—Статья посвящена героическим будням трудящихся Эчмиадзина, их трудовым подвигам, служившим укреплению тыла в годы Великой Отечественной войны.